75 կոմունիստներից—60-ը աշխատում են կոլտնտեսութեաններում, նրանցից վորպես շարքային կոլտնտեսականների աշխատում են 52 կոմունիստ: Յուրաքանչյուր բրիգադում կան կոմունիստներ: Կուսակցական ուժերի դասավորումն անց և կացված ըստ բրիգադի կազմի այն հաշվով, թե տվյալ բրիգադի կողմից սպասարկվող տնտեսութեան տեղամասն վոր չափով և վճողական կոլտնտեսութեան աշխատանքում, հաշվի առնելով արտադրական առաջադրանքներն ու դրանց կատարման ընթացքը տվյալ բրիգադում և այլն: Սակայն, հրահանգիչ ընկ. Վարդանովի աշխատանքում յեղած խոշոր և եյական թերութեանը կուսակցական ուժերի դասավորման գործում պետք և համարել այն, վոր կոլտնտեսութեանում աշխատող 60 կոմունիստներից, միայն չորսն են աշխատում անասնապահական ֆերմաներում: Այս թերութեանն առանձնապես մեծ նշանակութեան և ստանում նրա համար, վոր Շահումյանի շրջանում տնտեսութեան առաջատար ճյուղն անասնապահութեանն և հանդիսանում:

Կոմունիստներին ուսումնասիրելու հետևանքով ընկ. Վարդանովը պարզել և, վոր 75 հոգուց զբաղեա (ցածր կրթութեամբ) են 17 հոգի, կիսագրագետ (կարդալ և գրել կարողացողներ)—51 և անգրագետ 7 հոգի: Կոմունիստների մեծամասնութեան քաղաքական պատրաստականութեանը բարձր մակարդակի վրա չի կանգնած: Այսպիսով, կուսակցական—մասսայական աշխատանքի մյուս հարցերի հետ միատեղ, յուրաքանչյուր կոմունիստի գաղափարական զինվածութեան և նրա ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման խնդիրն և ծառայել:

Վերջին յերեք ամիսներին, սկզբնական կուսակազմակերպութեաններին վերակառուցման ընթացքում ընկ. Վարդանովն ընդհուպ դբաղվել և կուսկուսավորութեամբ և ձեռք և բերել հետևյալ արդյունքները. 3 տարեկան և 4 թեկնածուական դարձցնելում 75 կոմունիստներից ուսանում են 71 հոգի (94,6%), բացի այդ, կուսակցական ուսուցման ցանցում ընգրկված են 30 կոմյերիտական և 50 անկուսակցական: Կուսկուսավորութեան մեջ ընդգրկված 151 հոգուց կանոնավոր հաճախում են պարապմունքներին միջին հաշվով 129 հոգի (85%):

Պարտականությունները բաժանումը կոմունիստների մեջ ընկ. Վարդանովը գործադրել է հետևյալ մեթոդներով: Առաջինը, դա—մշտական կուսբեռնավորումն է (կուսկազմակերպիչ՝ բրիգադայում, խմբագիր՝ պատի (դաշտի) թերթի և յերկրորդը, կոմունիստներին վորոշակի առաջադրանքներ, հանձնարարություններ տալը, վորոնք պայմանադրված են կատարման կարճ ժամկետով (ստուգել, թե ինչպես է ընթանում սոցմրցման պայմանագրերի կետերի կատարումը, զրույցներ անցկացնել, թերթերի բարձրաձայն ընթերցում և այլն):

Առանձին ուշադրություն է նվիրում ընկ. Վարդանովը միասնական կուսորվա—կուսակցական աշխատանքի այդ կարևորագույն ողակի—նախապատրաստմանն ու անցկացմանը: Վերջին ժամանակներս սկզբնական կուսկազմակերպությունները հաջողացրել են ավելի կազմակերպված կերպով անցկացնել կուսակցական ժողովները: Այժմ արդեն «հանձնաժողովներ», «յեռյակներ» չեն ստեղծվում, չեն ընդունվում ընդհանուր և յերկար բանաձևեր, այլ ընդունվում են կոնկրետ վորոշումներ՝ մատնանշելով, թե ով և ինչ ժամկետում է կատարում վորոշման այս կամ այն մասը: Հենց մյուս որն իսկ, յուրաքանչյուր կոմունիստ, ինքը հարվածային աշխատանքի որինակ ցույց տալով արտադրության մեջ, կազմակերպում է անկուսակցական կոլտնտեսական մասսաներին՝ կոլտնտեսության առաջ դրված կոնկրետ խնդիրների կատարման համար: Այսպես, որինակ, բերքահավաքման կամպանիայի հարցի վերաբերյալ կուսորվա կազմակերպված հետևանքով փորձնական մասսայական դաշտ գուրս գալը ցույց է տվել կոլտնտեսականների և աշխատալոր մենտնտեսների պատրաստ լինելն հացահավաքին:

Մյուս կուսորը նվիրված է յեղել կոլտնտեսությունների, բրիգադների և առանձին կոլտնտեսականների միջև յեղած սոցմրցման պայմանագրերի ստուգմանը: Սոցմրցման ընթացքի քննարկմանը մասնակցություն են ունեցել մյուս կոլտնտեսությունների ստուգիչ բրիգադաները: Ամեն որ յերեկոյան, աշխատանքից հետո, կոլտնտեսության նախագահը կամ սկզբնական կուսկազմակերպությունից ղեկավարը հաղորդում է, թե վոր կոլտնտեսության բրիգադը, վոր առանձին կոլտնտեսականներն են գնում առաջից, ինչ ցուցանիշներ ունեն նրանք, ինչպես են նրանք հասել այդ բանին: կոլտնտեսությունները դաշտային աշխատանքների յեռունը շրջանում բանվորական ուժի պակաս են զգացել, միևնույն ժամանակ կանանց աշխատանքն ուղտագործվել է միայն ժամանակավոր աշխատանքում (պարտեզների, խաղողի այգիների բերքահավաքի գործում): Այս հարցն ընկ. Վարդանովի կողմից քննություն է դրվել կուսակցական ժողովներում: Արդյունքը յեղել է այն, վոր կանայք սկսել են կամ անմիջական մասնակցություն ունենալ դաշտային աշխատանքներում, կամ ել

տղամարդկանց ազատել են ոժանդակ բնույթի աշխատանքից (ձաշի, թեյի պատրաստումը):

Ընկ. Վարդանովի անմիջական մասնակցությունը անցկացված կուսակցական—մասսայական աշխատանքի ծավալման և ամրապնդման շնորհիվ, դարնանային ցանքի 208 հեկտար պլանը կոլտնտեսությունները կատարել են լիովին 11-15 աշխատանքային որվա ընթացքում:

Լենինի անվան կոլտնտեսությունը, բերքահավաքի կամպանիայի լավագույն կերպով անցկացման սոցմրցության հետեվանքով, հունիսի 17-ին առաջինն է հավաքել, կալսել և պետությունը հանձնել 800 կիլոգրամ գարի: Անցյալ տարի նույն այդ կոլտնտեսությունում 25 հեկտար տարածություն վրա գարնանային ցանք կատարելիս վատնված է յեղել 3,803 աշխոր, իսկ այս տարի 26,5 հեկտարի համար վատնվել է միայն 2,850 աշխոր: Հրահանգիչ Վարդանովի աշխատանքի սֆերայում ընկած բոլոր տնտեսություններից կոլեկտիվացված է 76,5 տոկոսը, այն ժամանակ, յերթ շրջանում կոլեկտիվացման տոկոսը կազմում է, մոտավորապես, 62 տոկոս:

ԿՈՐՆԻՆՈՎ

(Ադրկոմկուսի (Բ) Լենինյան՝ Երջկոմի հրահանգիչ, Բագու)

աշխատել է վորպես շրջկոմի ազիտ-մաս բաժնի վարիչ, իսկ բաժինների վերացումից հետո նշանակված է շրջկոմի պատասխանատու հրահանգիչ և ամբացված է նավթի շահագործման գրուպաների 10 սկզբնական կուսկազմակերպություններին, վորոնք ունեն 494 կոմունիստ:

★

Ընկ Կորնիլովը, վորպես հրահանգիչ, սկսել է իր աշխատանքը սկզբնական կուսկազմակերպությունների ղեկավարների ուսումնասիրությունից, նրանց քաղաքական պատրաստականություն ստուգումից, գրուպաներում տարվող կուսակցական-մասսայական աշխատանքի ուսումնասիրությունից և թե ինչպես է կատարվում արտադրական ծրագրերը:

Սրա հետևանքը յեղել է այն, վոր սկզբնական կուսկազմակերպությունների ղեկավարների անհրաժեշտ վերստաստվորումն է անցկացվել: Վճռողական, շահագործման 10-րդ գրուպայում վորպես կուսկոմի քարտուղար աշխատել է ընկ. Անիպովը, վորն—ընդհանուր առմամբ վատ կոմունիստ չի, բայց այնուհանդերձ քաղաքականապես այնքան էլ պատրաստված չի և չունի կազմակերպչական ղեկավարության բավականաչափ ունակություններ:

հնկ. Անտիպոլը տեղափոխված է շահագործման մի ուրիշ, նվազ պատասխանատու գրուպա այն հաշվով, վորպեսզի նա աշխատանքի ավելի թեթև պայմաններում կարողանա սովորել կուսակցական աշխատանքի «տեխնիկան», իսկ նրա տեղը տեղափոխվել են ավելի ուժեղ աշխատողի՝ 16-րդ գրուպայի կուսկոմի քարտուղար ընկ. Միրզա Մամեդին:

Նույնպես փոխարինված է շահագործման 1-ին գրուպայի կուսկոմի քարտուղար ընկ. Սուլեյմանովը, վորին հարկ յեղավ ազատել կուսկոմի քարտուղարի աշխատանքից, նկատի ունենալով նրա քաղաքական թույլ պատրաստականությունը և կուսակցական-մասսայական աշխատանքի վատ դրուժը գրուպայում:

Ուսումնասիրելով սկզբնական կուսկազմակերպությունների ղեկավարներին և կուսկոմի անդամներին, ընկ. Կորնիլովը բացատրել է նրանց կուսաշխատանքի վերակառուցման հարցերը, ծանոթացրել նրանց թե ինչպես պետք է աշխատեն նրանք, ինչո՞ւմ են կայանում նրանց պարտականությունները, ինչ բանի համար են պատասխանատվություն կրում նրանք և այլն:

Նախ քան կուսակցական կազմակերպությունների կազմակերպչական վերակառուցման անցնելը, շրջկոմի հրահանգիչները, այդ թվում և ընկ. Կորնիլովը, շրջկոմի քարտուղար ընկ. Ախուն Զադեյի առաջադրանքով ծանոթացել են ձեռնարկությունների տնտեսական կառուցվածքի հետ: Տնտեսական կառուցվածքի մեջ յերեվան են բերվել մի ամբողջ շարք թերություններ: Այս հարցը քննություն են առել շրջկոմի բյուրոյում և միայն այն բանից հետո, յերբ տնտեսական ղեկավարությունը ճշտել է կառուցվածքը գրուպաներում, անցել են սկզբնական կուսկազմակերպություններին վերակառուցմանը: Կազմակերպչական վերակառուցումն ավարտելուց հետո շրջկոմի քարտուղար ընկ. Ախուն-Զադեն հրահանգիչներին խորհրդակցություն է հրավիրել և մանրադնին կերպով հրահանգել և նրանց այն մասին, թե ինչպես պետք է աշխատել, կուսկոմի քարտուղարների և կուսկազմակերպիչների հետ: Հրահանգիչ ընկ. Կորնիլովին հետ շրջկոմի քարտուղարը յեղել է 6-րդ և 7-րդ գրուպաներում, վորտեղ կուսկազմակերպիչներին հետ գրուպայի անցկացրել նրանց աշխատանքի մասին: Իրանից հետո ընկ. Կորնիլովին ինքն է գրուպայի անցկացրել կուսկազմակերպիչներին հետ՝ ոգտագործելով շրջկոմի քարտուղարի անցկացրած գրուպայի փորձը:

Բայց ընկ. Կորնիլովը դրանով չի սահմանափակվել: Նրա անելիքներին մեջ էր մտնում սովորեցնել կուսկոմի քարտուղարին աշխատել կուսկազմակերպիչների հետ, իսկ այս յերկուսին՝ յուրաքանչյուր կոմունիստի հետ առանձին: Այս նպատակով նա՝ մի կուսկոմի քարտուղարի հետ աշխատանք է տարել առաջիկա կուսակցական ժողովին նախապատրաստվելու համար, ընկ. Կորնիլովը

կանկրետ որինակներին վրա ցույց է տվել կուսկոմի քարտուղարին, թե ինչպես պետք է նախապատրաստվել կուսորն անցկացնելու համար: Սովորաբար ընկ. Կորնիլովին ինքն էլ է մասնակցում կուսակցական որվա նախապատրաստման գործին՝ մի վորև սկզբնական կուսկազմակերպությունում, իսկ հետո այդ աշխատանքի փորձը տալիս է մյուսներին: Պատրաստվելով կուսորի անցկացմանը՝ նա կանչում է կուսկազմակերպիչներին, մանրադնին կերպով հրահանգում է նրանց՝ կուսորվա նախապատրաստման գործում մասնակից է դարձնում պրոֆիկազմակերպիչներին, կոմյերիտական և կանանց ակտիվին, իսկ նրանց միջոցով աշխատանք է կազմակերպում անկուսակցական բանվորներին հետ ըստ առանձին գրուպաների և նրանցից յուրաքանչյուրին հետ առանձին: Իրա հետևանքով կուսակցական ժողովներն անցնում են ներկա յեղողներին մեծ ակտիվություն և ծավալուն բույնիկայան ինքնաքննադատություն պայմաններում:

Կուսկուսավորությունը դրուժյունն ստուգելով, ընկ. Կորնիլովը պարզել է, վոր շահագործման 4 ըդ գրուպայում, կանոնադրություն-ծրագրային խմբակում, բոլոր 22 ունկնդիրներն էլ հայեր են, իսկ ուսուցումը տարվում է ուսերին լեզվով: Ունկնդիրները վատ են հաճախել պարապմունքներին, անցկացած նյութը չեն յուրացրել: Այս դրուժյունն անհապաղ ուղղվել է մի ղեկավար նշանակելու միջոցով, վորը պարապմունքներն անց է կացվում հայերեն լեզվով:

Կուսակցական աշխատանքի վերակառուցման ընթացքում, ընկ. Կորնիլովին ղեկավարել է ավարիաների դեմ պայքար մղելու հարցերով: Առաջ, սովորաբար, յեղել է այսպես՝ Յերբ գրուպայում կանգ եր առնում յոր նասոսը, ապա առանձին կուսկոմիներ այդ հարցը դնում էյին բյուրոյում, հերթապահ տեխնիկին «հուսի էյին տալիս», իսկ յերբեմն էլ տուժեր էյին տալիս և կարծում էյին, թե դրանով իրենց խնդիրն սպառվում է: Այժմ, վերակառուցումից հետո արդեն ուրիշ մեթոդներ են կիրառվում, վորոնք, իհարկե, չեն բացառում այդ հարցերը կուսկոմիներում դնելու գործը, այլ խնդիր են դնում իրենց՝ մորիլիզացիայի յնթակազմակերպիչներին հասարակությունը արտադրական բացերը վերացնելու շուրջ: Որինակ, 8-րդ գրուպայում, յուղողի պատճառով տարվել է առանցքակալը (պրոդիպիկ): Այս յուղողի վատ աշխատանքի մասին պատմել են բոլոր հերթակալություններում, բացի այդ նրան հանել են սև տախտակի վրա:

Մի քանի հին բանվորներ, վորոնք 25-30 տարվա արտադրական ստաժ ունեն, ավարիաներ են կատարել և ահա մի այդպիսի ղեկավար վարվել են այսպես, հավաքվել են 15 հոգի հին արտադրական բանվորներ և գնացել կատարված ավարիայի տեղը: Ավարիայի հանցավորը սկսել է արդարանալ՝ պատճառաբանելով

տրակատրի փչացած լինելով, վատ սարքավորումով և այլն: Այդ միջոցին հին բանվորներից մեկը ցույց է տալիս ավարիա կատարողին, վոր ավարիան տեղի յե ունեցել վատ ամրացման պատճառով, վորի մեջ հենց ինքն է մեղավոր: Ավարիա կատարողին մնում եր միայն խոստովանվել: Այսպիսի մոտեցումը մի կողմից հանցավորին սովորեցնում է, վոր նա հետագայում անփութություն թույլ չտա աշխատանքում, իսկ մյուս կողմից ել՝ բոլոր ներկա յեղող բանվորներն ել ավելի ուշադիր կվերաբերվեն դեպի իրենց աշխատանքը:

Հյուսն ընկ. Գիրերովը պատիվ է յեղել, զբուսլայում նրան չեյին նկատում: Իսկ այն բանից հետո, յերը հին բանվորներին հետ աշխատանք են ծավալում, զբուսլայներ են անցկացնում նրանց հետ, խոսում յուրաքանչյուրի հետ առանձին, ապա ընկ. Գիրերովը արտադրության լավագույն հարվածայինների մեկն է զարձեց: Այս մասին խոսում են նրա աշխատանքի ցուցանիշները. յեթե Բուդչոնուտ անվան արհեստանոցի 6 բանվորներից բաղկացած բրիգադան մի կաշական հավաքում է 6 բանվորական ուրում, ապա ընկ. Գիրերովի 3 հոգուց բաղկացած բրիգադան հավաքում է 3 ուրվա ընթացքում և 300 ուրվով ավելի եփան: Այսպիսի շատ որինակներ կարելի յե բերել (13-րդ, 10 րդ, 8-րդ, 5-րդ շահագործման զբուսլայները):

Համակրողների խմբակներ կազմակերպելու մասին 17-րդ կուսհամագումարի վորոշումից հետո, շատ կուսկոմիտեերի քարտուղարներ և կազմակերպիչներ յենթադրել են, վոր համակրողների խմբակներ կազմակերպելը կատարվելու յե կուսակցության գտումն անցկացնելուց հետո: Սրա կապակցությամբ ընկ. Կորնիլովը բացատրել է նրանց, վոր այդ ճիշտ դրույթ չէ և միաժամանակ նախադրուշացրել է կամպանիականությունից ու ձևական մոտեցումից դեպի խմբակներ կազմակերպելու և համակրողների հետ աշխատելու հարցերը:

Կուսկազմակերպիչների խորհրդակցություն է անցկացվել՝ վորտեղ մանրագնին կերպով մշակել են համակրողների խմբակների մասին յեղած նյութերը, այնուհետև այս հարցը քննության են առել կուսացական խմբակների ժողովներում և միայն դրանից հետո յեն սկսել աշխատանք տանել անկուսակցականներին համակրողների խմբակներում ներգրավելու ուղղությամբ: Խմբակային և անհատական բացատրական աշխատանքի հետևանքով, անկուսակցական ակտիվիստներն սկսել է դիմումներ տալ իրենց համակրողների շարքերն ընդունելու մասին: Դիմումներ են տալիս, որինակ, այնպիսի ընկերներ, ինչպիսին է Կուդաշկին Ֆյոդորը—հերթավոր ինժեներ, վորը 25-ամյա արտադրական ստաժ ունի, Ավետիսյանը, խորանասուսային շահագործման բանվոր,

վորը 13-ամյա արտադրական ստաժ ունի, Սերովը՝ ելեքտրոմոնտյոր (արտադրական ստաժ.—18 տարի), փականագործ Կալաշնիկովը, Ալլահվերդիյեվը, վորոնք նույնպես վոչ պակաս քան 10 տարվա արտադրական ստաժ ունեն և այլն:

Այս բոլորն ասում է այն մասին, թե ինչպիսի արդյունքների կարելի յե հասնել, յեթե ուշադրության կենտրոնում լինի կուսակցական-մասսայական աշխատանքը, աշխատանքը՝ յուրաքանչյուր կոմունիստի և անկուսակցական բանվորի հետ առանձին:

Կուսակցական-մասսայական աշխատանքի հետագա ծավալումն ու բարելավումն ընկ. Կորնիլովը կենտրոնացրել է արտադրության հետևյալ հիմնական հարցերի վրա. պլանային-նախագրուշական նորոգում և կանգ առած նավթահորերի գործարկում, ռեզերվի հետախուզում, նոր նավթահորերի յուրացում, նավթի շահագործման նոր տեխնիկայի արմատացում ու տիրապետում, պայքարն ավարիաների դեմ, աշխատանքի բարելավում՝ գիշեր ժամանակ:

Ընկ. Կորնիլովը հսկայական նշանակություն է տալիս կուսակցական աշխատանքի փորձի ընդհանրացմանն ու փոխանակմանը և հաջողեցնում է, վորպեսզի կուսակցական-մասսայական աշխատանքի լավագույն ձևերն ու մեթոդները, այս կամ այն նախաձեռնությունը դառնան կուսկազմակերպությունների սեփականուցությունը, վորը խոշոր ոգնություն է ցույց տալիս աշխատանքում:

Ընկ. Կորնիլովը խոշոր թերություն է համարում այն, վոր նա վորպես հրահանգիչ դեռ բավականաչափ չի աշխատում իր վրա: Թերթերից նա կարդում է «Բակ-Բաբոչի», «Վիշկա», «Պրավդա», «Կուս. շինարարություն» ժուրնալը վոչ կանոնավոր, «Ջարյա վոստոկա»-ն և «Բոլշեվիկ» ժուրնալը: 17-րդ համագումարի վորոշումների մշակումը՝ շրջումի կից կազմակերպված 6-րդ դասընթացներում՝ յերևան է բերել նրա վոչ բավականաչափ գիտակ լինելն այդ վորոշումներին և նա անցնում է սխտեմատիկ կուսակցական ուսուցմանը: Նա չի մոռանում նաև տեխնիկական ուսուցման մասին, վորովհետև առանց արտադրության պրոցեսներին գիտակ լինելու չի կարելի ճիշտ կազմակերպել կուսակցական-մասսայական աշխատանքը: Նա գտնում է, վոր դեռ քիչ է աշխատում շարքային կոմունիստների հետ, չի կարողացել դեռ իր շուրջը կազմակերպել արտաշտատային հրահանգիչներ, անպլանայնություն կա աշխատանքում, բավականաչափ չի զբաղվում կոմյերիտմության ղեկավարման հարցերով:

ԱՇԽԱՏԵԼ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ

(Լ. Շմիդտի անվան գործարանում արվող կուսակցական-մասսայական աշխատանքի փորձից)

Կոմունիստը պետք է լինի կուսակցական կազմակերպության աշխատանքի ուշադրության կենտրոնում: Վերակառուցել կուսակցական աշխատանքը 17-րդ կուսհամագումարի վերջումների վրդով—այդ նշանակում է արմատախիլ անել շտամպով չչինան, ֆունկցիոնալիան, զբառնյակայնությունը, վերջումը ծածկում են կենդանի մարդուն, բարձրացնել յուրաքանչյուր կոմունիստի կազմակերպող, ղեկավարող դերը, բարձրացնել կուսակցության անդամի ավանգարդային դերն արտադրության մեջ:

Այս խնդիրների լույսի տակ Շմիդտի անվան գործարանում (Բագու) կիրառվել են կուսակցական աշխատանքի ամենազանազան ձևեր ու մեթոդներ բանվորների յուրաքանչյուր խմբի և յուրաքանչյուր առանձին կոմունիստի նկատմամբ դիֆերենցիացիայի յենթարկված մոտեցումով:

Գործարանում գոյություն ունեն լիտեյնի ցեխ, մարտենի և ելեքտրական հնոցներով, դարբնոցային ցեխ, մեխանիկական, ատաղձագործական ցեխեր և այլն: Միատեսակ մոտեցում կա արդյոք դեպի աշխատանքը ցեխերում: Իհարկե վոչ:

Մարտենի հնոցն աշխատում է ամբողջ որեր առանց ընդմիջումի (համարյա չորս հերթով): Հնոցները բեռնելու և աղատելու պրոցեսում բանվորները 10-15 րոպե, մաքրվում կես ժամվա հանգիստ ունեն. ինչպես է ոգտագործվում այս ժամանակը կուսակցական աշխատանքի համար: Վերցնենք կոնկրետ որինակ—համակրողների խմբակներ կազմակերպելու առթիվ: Հերթական կուստրվա նախապատրաստումը: Կոմունիստների ժատկոմիս ու կուլյասովը կուստրվա առնչությունը՝ մաքտ նի հնոցին սպասարկող բանվորների մեջ նախապատրաստական աշխատանք տանող ընկերները կոնկրետ առաջադրանքներ են ստացել: Նրանք զրույցներ են անցկացրել բանվորների հետ ըստ հերթականության, պարզաբանել են կուսակցության կանոնադրության կետերը՝ համակրողների խմբակների մասին անց են կացրել կուստրվա վերաբերող նյութերի ընթերցումներ և այլն:

Մեխանիկական ցեխում կան ուրիշ հնարավորություններ, ինչպես որինակ ճաշի համար տրվող մի ժամյա ընդմիջումը: Կարելի չէ նաև ոգտագործել կես ժամ մինչ աշխատանքը և աշխատանքից հետո: Այստեղ ճաշի ընդմիջումին, ճաշարանում ինֆորմա-

ցիա յեն կազմակերպել համակրողների խմբակների հարցի առթիվ, ապա անմիջապես ցեխում, բանվորների առանձին խմբակների դժով անց են կացվել ընթերցումներ և զրույցներ:

Կուսակցական աշխատանքի ձևերն ու մեթոդներն ընդունում են այս կամ այն կերպարանքը համապատասխան արտադրական բանվորների պատրաստակաթյանը: Որինակ, չուզուեաձուլական ցեխում բանվորներն ավելի քիչ են պատրաստված, քան մեխանիկականում, բացի այդ, բանվորների կազմում կան թուրքեր, հայեր, վրացիներ: Կուստրվա առթիվ նյութերի ընթերցումը բանվորների յուրաքանչյուր խմբակի համար կազմակերպվել է մայրենի լեզվով, զնացել են մի քանիսի բնակարանը, հանրակացարանը:

Վերցնենք կուստրուցման հարցը: Ատաղձագործական ցեխի կուսխմբակը (խմբակի կազմակերպիչ ընկ. Մարգիսով) այս աշխատանքում որինակներ է ցույց տալիս: Այստեղ բոլոր կոմունիստներն ընդգրկված են կուսուցման մեջ: Առաջ 14 հոգուց պարապմունքներին հաճախել են միայն 8-ը: Խմբակի կազմակերպիչ ընկ. Մարգիսովն, այցելել է ընկ. ընկ. Սղաջանովի, Մարգիսովի Մամեդովի բնակարանները, խոսել նրանց հետ, թե ինչու պարապմունքներին չեն հաճախում նրանք, պարզել է պատճառները, վորից հետո հասել է նրան, վոր այժմ բոլոր 14 կոմունիստներն ել կանոնավոր կերպով հաճախում են պարապմունքներին: Բացի այդ, անհատական մոտեցման միջոցով, նա 35 անկուսակցական բանվորներից կուստրուցման մեջ է ներգրավել 29 հոգի: Նույն միջոցով ել նա հաջողացրել է տեխուսուցմանը կանոնավոր կերպով հաճախել: Այս բանի հետևանքով, ցեխն առաջ պլանը չեր կատարում, իսկ այժմ կատարում է 104-115% -ով: Առաջ ցեխում կարելի եր տեսնել աղբ, կեղտ: Իսկ այժմ որինակելի մաքրություն է, ծաղիկներ և նույնիսկ վարագույրներ:

Բայց ընկ. Մարգիսովի կուսխմբակը չի միայն, վոր կուստասպայական աշխատանքի ծավալման հետևանքով կարողացել է լավ ցուցանիշների հասնել արգֆինչյանի կատարման ուղղությամբ:

Մեխանիկական ցեխի կուսխմբակը (խմբակի կազմակերպիչ ընկ. Դորոնին) ունի 22 կոմունիստ: Սկզբում այստեղ աշխատանքի պլաննային թույլ է յեղել, բանվորներն ուշացել են աշխատանքից, թափթիվածություն է յեղել, պլանը չի կատարվել: Նա հարցը զրել է կուսկոմի առաջ, թե ինչ անի: Նրան մի շարք ցուցումներ են, խորհուրդներ են տվել և առանձնապես շեշտել են, վոր անհրաժեշտ է ուսումնասիրել յուրաքանչյուր կոմունիստին առանձին, ճանաչել յուրաքանչյուր կոմունիստին, թե նա վորտեղ և ինչպես է աշխատում. Ընկ. Դորոնինն սկսել է կուսակցական ուսուցումից—բոլորն են արդյոք հաճախում պարապմունքներին: Դուրս է յեկել, վոր վոչ բոլորն են հաճախում: Վերցնենք որինակ ընկ. Մախանչևիին: Նա կուսակցության անդամ է 20 թվից,

տարրական անգրագետ, աշխատանքի յե ներկայացել միշտ ուշացումով: Ընկ. Դորոնինը նրան կցել է մի ուսանողի, վորն ըսելու է պարագել նրա հետ՝ վերացնելու նրա անգրագիտութիւնը: Անցել է յերկու ամիս: Մախնաչեվան սովորել է կարգադրել, սկսել է հաճախել քաղխմբակի պարապմունքներին, տեսուչութեան պարապմունքներին և իր արտադրական պլանները կատարում է արդեն 105—107 տոկոսով, իսկ առաջ 70—75 տոկոսից ավելի չի կատարել: Այսպիսով, Մախնաչեվան դարձել է ակտիվ բանվորուհիներից մեկը, ակտիվ կին կոմունիստներից մեկը: Հիմա նա համառորեն պահանջում է ողնել իրեն յուրացնելու կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութիւնը:

Մի ուրիշ որինակ,—ընկ. Մեջլիգովը, կուսակցութեան անդամ է 1928 թվից, յերկար ժամանակ աշխատել է վորպես սևագործ բանվոր: Յեխում նրան չեն տեսել և չեն լսել: Ընկ. Դորոնինը վճռել է հետաքրքրվել նրա անձնական կյանքով: Բանից դուրս է յեկել, վոր նա մեծ ընտանիք ունի, ժամանակ չունի իրենով զբաղվելու: Ընկ. Դորոնինը անտեսավարի առաջ հարց է դրել և ընկ. Մեջլիգովին փոխադրել են ավագ բանվոր: Նրա համար վորպեսզի նա կարողանա ավելի լավ ուսումնասիրել ավագ բանվորի պարտականութիւնները և վերացնել իր տեխնիկական անգրագիտութիւնը՝ նրան կցել են մի ինժեներ: Ոգնել են կուսուցմամբ զբաղվելու համար: Նրա համար զբքեր են գնել թուրքերեն լեզվով—ընկ. Ստալինի ղեկուցումը, կուսակցութեան կանոնադրութիւնը, վորոնք ուսումնասիրում է նա իրեն կցված կոմունիստ ընկ. Ռուստամովի ոգնութեամբ: Այժմ ընկ. Մեջլիգովը մեծ ակտիվութիւն է ցուցաբերում և աշխատում է ավելի լավ, քան նրա ընկերները:

Այն բանից հետո, յերբ հրապարակվեցին Համկոմկուսի (բ) Անդրերկրում և Ադրկոմկուսի (բ) Բազկոմի վորոշումները՝ Կազանովիչի անվան նավթահանքի և Արտյոմի կղզու կուսամասայական աշխատանքի գրութեան մասին, խմբակները կազմակերպիչները խորհրդակցութիւն է հրավիրել, վորտեղ մանրամասնորեն մշակել են այդ վորոշումները, և ապա դրել են ցեխերի կուսակցական ժողովների քննութեանը: Ժողովներում հաստատել են, վոր շատ բաներ այդ վորոշումներում վերաբերվում են նաև գործարանի կուսակցական կազմակերպութեան: Պարզել են, վոր շատ բաներ այդ վորոշումներում վերաբերվում են նաև գործարանի կուսակցական կազմակերպութեան: Պարզել են, վոր շատ կոմունիստներ բավարար չափով չեն իմանում կուսակցութեան կանոնադրութիւնը:

Կուսակազմակերպիչների և խմբակների կազմակերպիչների համար կազմակերպել են սեմինարներ՝ ուսումնասիրելու կուսակցութեան կանոնադրութիւնը: Սրան նվիրել են 3 պարապմունք,

և ապա բոլոր ճաշարաններում, անկյուններում, ճաշի ընդմիջումները, հերթափոխութեան ժամանակ կազմակերպել են խմբակային ընթերցումներ և զրույցներ կուսակցութեան կանոնադրութեան շուրջը, ըստ վորում այդ աշխատանքով ընդգրկվել են վոչ միայն կոմունիստները, այլ և կոմյերիտականները և անկուսակցական ընկերները: Մի քանի ընկերների հատուկ կցվել են մի խումբ մարզիկ, վորպեսզի նրանք սիստեմատիկաբար աշխատեն իրանց հետ վոչ միայն ցեխում, այլ և բնակարաններում: Հին բանվորներին, ինչպիսիք հանդիսանում են ընկ. ընկ. Բազիյանը, Տեր-Բարսեղովը և ուրիշները, վորոնք 10, 20, 40 տարվա արտադրական ստաժ ունի, կցել են կուսկոմի աշխատողներին, կուսկոմի անդամներին, վորոնք գնում են նրանց բնակարանները, ընթերցանութիւններ և զրույցներ են անցկացնում մի բաժակ թեյի շուրջը:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ԳՅՈՒՂՈՒՄ ԿՈՍՈՒՆԻՍ-ԱՆՀԱՏԸ

(Մոսկվայի մարզի կուսակազմակերպութեան աշխատանքի փորձից)

ԱՆՉԱՐՈՎ ՅԵՐԿՈՒ ԲՈՒՅԵՎԻԿ

Պրետայելը՝ «Կրասնի Պուտիլովց» կոլտնտեսութեան կոմունիստ-անհատ է: Յեվսեյելը Պլավսկու շրջանի Կրասնի Ուտյաբըր» կոլտնտեսութեան կոմունիստ-անհատը:

Նրանք յերկուսն էլ տնտեսական աշխատանքի վրա յեն: Պրետայելը բրիգադի է, Յեվսեյելը՝ կոլտնտեսութեան նախագահ: Նրանք յերկուսն էլ վարչական ղեկավարութիւնը հմտորեն շարկապում են կուսակցական-մասսայական աշխատանքի հետ:

Պատմենք Պրետայելի մասին: Նա բրիգադում կազմակերպել է «Ուզարնիկ պոլեյ» պատի թերթի ամենօրյա թողարկումը: Թերթի միջոցով հաջողացրել է աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդումը:

Պրետայելը բրիգադում մրցում է կազմակերպելու Կազմակերպել է քաղաքային և մարզային թերթերի ամենօրյա ընթերցումը: Թերթերի ընթերցումը հաճախ վեր է անվում յերկարատև զրույցների՝ կուսակցութեան և կառավարութեան կարևորագույն վորոշումների մասին, զրույցները՝ միջազգային և ներքին գրութեան ասպարիզում տեղի ունեցող խոշորագույն ղեկավարի մասին:

Յերբ կոլտնտեսականներն իմացել են ճապոնական շողենավերի հայտնի ինցիդենտի մասին, Պրետայելը անկարող է յե-

զել բացատրել մեր սահմանների աշխարհագրական դերքը: Բայց նա իրեն չի կորցրել: Հաջորդ որը նա դաշտ և հրավիրել ուսուցիչին՝ քարտեզով:

Այսպես հազամանորեն զրույց և կայացել ճապոնիայի հետ ունեցած մեր փոխհարաբերությունների մասին:

Պոլետայեֆը ամեն ինչ ինքը չի անում: Թերթի թողարկման դործին նա զբաղվել է բրիգադի լավագույն հերկող ընկ. Չախարովին, թերթերի ընթերցումն անց և կայնում կանանց աշխատանքի գծով բրիգադի ոգնական ընկ. Մարինիչեվան, կարմիր և սև տախտակներին հետևում է հերկող ընկ. Մուսարակովը:

Ընկ. Յեվսեյեվը Պոլետայեֆից վատ չի աշխատում:

Վաղ գաղնանային ցանքի որերին Յեվսեյեվը կուտնտեսականներին, յերիասարգություն հետ խորհրդակցություն և անցկացրել է ձերերի ու ձեր կանանց առանձին ժողով հրավիրել: Նա հասել է նրան, վոր դատել որին իր կուտնտեսությունում աշխատանքի դուրս չգալու վնչ մի դեպք չի պատահել: Բացառություն է կազմել կուտնտեսական Կուչերայեվը: Յեվսեյեֆի բազմաթիվ անգամ արած զրույցները նրա հետ ցանկալի արդյունքներ չեն ափել: Այն ժամանակ Յեվսեյեֆը Կուչերայեֆին խրճիթում կազմակերպում է կուտնտեսության վարչություն շրջիկ նիստը:

Ինքը Յեվսեյեֆը «Պոլետայեֆից» թերթում տպված իր որագրում այնպես է պատմում մասաչայական աշխատանքի այդ հետաքրքիր ձևի մասին.

«Յես բաց եմ անում ժողովը.

— Ընկերներ: Մենք այսօր հավաքվել ենք այստեղ մի կարևոր դործի համար: Ստեփան Ոսիպովիչը դուրս չի գալիս աշխատանքի, — և յես մատնանիշ արել խրճիթի տիրոջը, վոր նստել եր այստեղ սեղանի հենց կողքին, գլուխը քաշ արած:

— Ապա, խոսենք, թե ինչպես վարվենք նրա հետ: Չես վոր նա իրեն ել է խայտառակում, մեր կուտնտեսությունն ել Ախր պետք է հիշել վոր մեր կուտնտեսությունը բարձրացված է մար գային պատվի տախտակին:

Վիճաբանություններում հանդես յեկան 9 հոգի:

— Ապա, դու ինքդ դատիր, — ասացին կուտնտեսականները՝ — ում ես դու ոգուտ տալիս: Վնչ քեզ, վնչ մարդկանց: Այ, դու վեր ջերս յեկել էիր կուտնտեսություն հաց խնդրելու, իսկ ինչ ես ստանալու դու յեկող տարի: Աշխորեր ել չունես դու:

Կուչերայեֆը վոչինչ չասաց. . . »

Իսկ հաջորդ որը նա դուրս յեկավ աշխատանքի:

Յեվսեյեֆը լավ է կազմակերպել մրցումը կուտնտեսությունում: Յերկու բարձր, լողունդներով և պլակատներով զարդարված կամարներ են կախված կուտնտեսության մուտքի վերևը:

Յեվսեյեֆը, կուտնտեսություն լավագույն հարվածայինների և հարվածայնուհիների՝ նրանց աշխատանքի կարճ բնութագրությունով, կազմակերպում է նկարների մեծ ցուցահանդես-գալերիյա

Կոմունիստներ անհատներ Պոլետայեֆին և Յեվսեյեֆին ամենորյա ղեկավարություն և ցույց տալիս քաղաքի: Քաղաքի աշխատողների զրույցները, անհատական առաջադրանքները, կոմունիստ-անհատների հատուկ վնջային և զոնային ժողովները, ազդիականները, — այս բոլորը բարձրացնում են կոմունիստ-անհատի կազմակերպչական դերը կուտնտեսային արտադրություն մեջ:

Ե. ՏՍՅՆՈՎ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ, ԽՈՐՀՈՒՐԳ, ԿՐԱՎՆԳՈՒՄ

Այժմ Կալյայի սկիզբը շրջանում կան չորս սկզբնական կուտնտեսային կուսակազմակերպություններ, 2 գյուղական, չորս թեկնածուական խմբակներ և 78 կոմունիստ-անհատներ: Հենց դրա համար ել կոմունիստ-անհատների հետ տարվելք աշխատանքի հարցը Կալյայի սկիզբը շրջանի համար բացառիկ նըշանակություն է ստանում: Շատ դեպքերում՝ շրջկոմի կողմից անհատների հետ ճիշտ զբոլած աշխատանքից և կախված մասսանհատների կազմակերպման հաջողությունը գյուղում, տնտեսական-քաղաքական կամպանիաների անցկացման գործի հաջողությունը:

Կոմունիստ-անհատները մեծ մասամբ աշխատում են վորպես գյուղխորհուրդների նախագահներ, կուտնտեսությունների նախագահներ: Շարքային կուտնտեսական և բրիգադիր- կոմունիստներն ընդամենը 10 հոգի յեն:

Կին-կոմունիստ Տաբաչկովան մի քանի ամսվա ընթացքում կարողացել է ձեռքավաճելից դուրս բերել կազմանովսկու գյուղխորհրդի «Մեջտի Իլիչա» կուտնտեսությունը: Նա լինելով այդ կուտնտեսություն նախագահը, կարողացել է ճիշտ կազմակերպել կուսակազմական-մասսայական աշխատանքը:

Կան քաղաքականագետ լավ պատրաստված կոմունիստ-անհատներ, վորոնք վոչ միայն սիստեմատիկաբար զբաղվում են իրենց սեփական քաղաքական մակարդակը բարձրացնելով, այլ և իրենք են արդեն ղեկավարում գյուղական քաղխմբակները (Ուշակովո, Յրոլովո և այլն):

Բայց քաղաքականագետ կիսագրագետ կոմունիստ-անհատներ չեն շատ կան: Համկոմկուսի (բ) Կալյայի սկիզբը շրջկոմն սկզբում

959

Отдел руководящих парторганов ЦК АКП(б)

Обмен опытом партийной работы

(материалы совещания инструкторов РК АКП (б)
20—21 июня 1934 г.)

ПАРТИЗДАТ
Баку—1934